ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ
ՏԵՂԱԿԱԼ

ЗАМЕСТИТЕЛЬ МИНИСТРА ОБОРОНЫ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
DEPUTY MINISTER OF DEFENCE
OF THE REPUBLIC OF ARMENIA

«07» 06 2024 թ.
№ ՊԱՇՊ-24/7-860

«Երմեդ» ՍՊԸ-ին
ՀՎՀՀ 04721572
ՀՀ, ք. Վաղարշապատ, Կնունյանց 26բ
հեռ. 099-70-20-34
էլ. հասցեն՝ adamyanerem@yahoo.com

ՀՀ պաշտպանության նախարարության և «Երմեդ» ՍՊ ընկերության միջև 20.05.2024թ. կնքվել է N ԲՄԱՊՁԲ-24-9/7-1 ծածկագրով ապրանքների մատակարարման գնման պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր), ըստ որի «Երմեդ» ՍՊ ընկերության կողմից պետք է իրականացվեր բժշկական պարագաների մատակարարում:

Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ «Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված՝ ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար բժշկական պարագաներ, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրի 2.4.1 կետի համաձայն՝ Վաճառողը պարտավոր է Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

Պայմանագրի անբաժանելի մասը կազմող N1 հավելվածով ապրանքների մատակարարման ժամկետ է սահմանված՝ 2024թ. համաձայնագիր կնքելուց հետո 60 օրացուցային օրվա ընթացքում:

«Երմեդ» ՍՊ ընկերությունը 22.05.2024թ.-ին ՀՀ պաշտպանության նախարարություն ներկայացված գրությամբ հրաժարվում է մատակարարել N ԲՄԱՊՁԲ-24-9/7-1 պայմանագրով նախատեսված ապրանքները:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Երմեդ» ՍՊ ընկերության կողմից խախտվել է պայմանագրով սահմանված պարտավորությունները, ՀՀ պաշտպանության նախարարությունը 2024թ. հունիսի 7-ին միակողմանի ամբողջությամբ լուծել է Պայմանագիրը:

0044, ԵՐԵՎԱՆ, ԲԱԳՐԵՎԱՆԴԻ 5, ՀԵՌ.՝ (+374 10) 29 45 45, ԷԼ.ՓՈՍՏ՝ karen.brutyan@mil.am
ЕРЕВАН, БАГРЕВАНДА 5, 0044, ТЕЛ: (+374 10) 29 45 45, ЭЛ.ПОЧТА: karen.brutyan@mil.am
0044, 5 BAGREVAND STR., YEREVAN, TEL. (+374 10) 29 45 45, E-MAIL: karen.brutyan@mil.am

Միաժամանակ հայտնում եմ, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ Մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարները:

Հաշվի առնելով վերոգրյալը, տեղեկացնում եմ՝ Պայմանագրի միակողմանի լուծման արդյունքում պայմանագրի կատարման ապահովման գումարը կազմում է 1,172,800 ՀՀ դրամ, որն անհրաժեշտ է վճարել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005000758 հաշվեհամարին և որակավորման ապահովման գումարը կազմում է 1,759,200 ՀՀ դրամ, որն անհրաժեշտ է վճարել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900008000664 հաշվեհամարին:

Միաժամանակ տեղեկացնում եմ, եթե մինչև 2024թ. հունիսի 17-ը ներառյալ Ձեր կողմից վճարվի վերը նշված 1,172,800 ՀՀ դրամ՝ պայմանագրի կատարման ապահովման և 1,759,200 ՀՀ դրամ՝ որակավորման ապահովման գումարները, ապա «Երմեդ» ՍՊ ընկերությունը չի ներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Նշված գումարները անհրաժեշտ է վճարել Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված վերը նշված գանձապետական հաշիվներին և վճարված կտրոնների բնօրինակները մինչև 2024թ. հունիսի 17-ը ներառյալ ներկայացնել ՀՀ ՊՆ գնումների կազմակերպման վարչություն, 2078 սենյակ:

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ